# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**10 նոյեմբերի 2023 թվական N 1229-Ա**

## «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՀԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Կարապետյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղում «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 2.4503 հա մակերեսով, 04-086-0004-0080 կադաստրային ծածկագրով հողամասը ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու վերաբերյալ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն, ***պարզեց հետևյալը.***

«ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Կարապետյանի կողմից /հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Մամիկոնյանց փ., 37շ., 19բն./ թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված խախտումներ:

Վերը նշված կապակցությամբ Համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման փաստով:

«ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Կարապետյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի հարուցման, անցկացման վայրի և ժամանակի մասին: /Ծանուցման հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 14-ին տրված N LO111700597AM ստացականը և 2023

թվականի հոկտեմբերի 23-ին առաքանին ստացողին հանձնված լինելը հավաստող էլեկտրոնային ապացույց /:

***Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.***

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 8-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 13-ի «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ–ի տնօրեն Վահան Կարապետյանին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի նոյեմբերի 9-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ–ի տնօրեն Վահան Կարապետյանի կողմից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղում ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 2.4503 հա մակերեսով, 04-086–0004–0080 կադաստրային ծածկագրով հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է՝ կատարվում է ձկնաբուծություն, ինքնակամ փոփոխվել է հողամասի գործառնական նշանակությունն ու հողատեսքը:

Վարույթի շրջանակներում «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ–ի տնօրեն Վահան Կարապետյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 26-ին գրություն է ուղարկվել Արաքսի համայնքապետարան /մտիցի համար՝ N3448/, համաձայն որի՝ «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ն տվյալ հողամասը ձեռք է բերել 2022 թվականի հունիսի 22-ից և նշված ժամանակ հողամասի վրա առկա է եղել հողային լիճ, և ընկերությունը որևէ գործունեություն չի ծավալել հողատեսքի նպատակային նշանակության փոփոխության՝ մասնավորապես լիճ կառուցելու համար, և իրենց կողմից նշված լճային տարածքում չի իրականացվել ձկնաբուծական և այլ նմանատիպ գործունեություն:

Սակայն, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից անցկացրած ստուգումների արդյունքում հայտնաբերած իրավախախտումները հստակորեն արձանագրում ենք, որ հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակության է, մինչդեռ չի օգտագործվում համապատասխան նշանակությամբ, բացի այդ նշվում է, որ հողամասը ձեռք բերելիս ակնհայտ է եղել, որ առկա է հողային լիճ, այսինքն ակնհայտ է եղել գիտակցումն այն բանի, որ հողամասը չի համապատասխանում իր գործառնական նշանակությանը, սակայն անձի կողմից շարունակվել է հողամասի ոչ նպատակային օգտագործումը, ինչի արդյունքում էլ շարունակվել է հողամասի գործառնական նշանակության ինքնակամ փոփոխումը:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից 2023 թվականի նոյեմբերի 9-ին զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Կարապետյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

***Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Կարապետյանի կողմից ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 04-086-0004-0080 կադաստրային ծածկագրով հողամասը օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, ինքնակամ փոփոխվել է գործառնական նշանակությունն ու հողատեսքը:

Արդյունքում տեղի է ունեցել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Իրավախախտող «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Կարապետյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղում ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 2.4503 հա մակերեսով 04-086-0004-0080 կադաստրային ծածկագրով հողամասը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու, գործառնական նշանակությունն ու հողատեսքը ինքնակամ փոփոխելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Իրավախախտող «ՍԻԹԻ ԼԱՅՆ» ՍՊԸ-ի տնօրեն Վահան Կարապետյանին տալ պարտադիր ցուցում՝ անհապաղ դադարեցնել նշված հողամասի ոչ նպատակային օգտագործումը:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ

օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 10
Արաքս համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477 araqs.hamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2023 թվականի N 1230-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25–ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Աշոտ Վոլոդյայի Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-035-0153-0019 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գրիբոյեդով, 4-րդ փողոց, 8 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 13
Արաքս համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477 araqs.hamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 նոյեմբերի 2023 թվականի N 1231-Ա

**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 04-033-0032-0054 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Գայ, Ա. Խաչատրյան փողոց, 8/1 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 13
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
**14 նոյեմբերի 2023 թվականի N 1232-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N02/14/08105-2023 գրությամբ ներկայացված մարզպետարանի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի եզրակացությունը.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 0,7524 հա խաղողի այգիները փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքերի՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 14
Արաքս համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի
նոյեմբերի 14-ի N 1232-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքերը ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու

| Հ/Հ | Ա.Ա.Հ | հասցե | Հողամասի ծածկագիր | Մակերեսը հա | հողատեսք | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | նախկին | ներկա |
| 1 | Արաքս համայնք | ՀՀ Արմավիրի մարզ Արաքս համայնք գ.Խորոնք | 04-050-0134-0045 | 0.2111 | Խաղողի այգի | վարելահող |
| 2 | Արաքս համայնք | ՀՀ Արմավիրի մարզ Արաքս համայնք գ.Խորոնք | 04-050-0134-0096 | 0.2299 | Խաղողի այգի | վարելահող |
| 3 | Արաքս համայնք | ՀՀ Արմավիրի մարզ Արաքս համայնք գ.Խորոնք | 04-050-0134-0026 | 0.3114 | Խաղողի այգի | վարելահող |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 0.7524 | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477 araqs.hamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 նոյեմբերի 2023 թվականի N 1233-Ա

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1–ին մասի 22–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25–ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50–րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս (էջմիածնի շրջ.) գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Յաշա Լյուդվիկի Խորշիկյանին սեփականության իրավունքով պատկանող 04-017-0035-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Արաքս (էջմիածնի շրջ.), Բարեկամության փողոց, 14 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 14
Արաքս համայնք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 նոյեմբերի 2023 թվականի N 1234-Ա

**ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԻՄԵՏ ԳՅՈՒՂԻ Մ.ՀԵՐԱՑՈՒ ՓՈՂՈՑ 33 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 04-023-0014-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.1 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԻԳԻԹ ՎԱՀԱՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ (ԾՆՎԱԾ 1970.ԹՎ) ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 10.06.2008թ. ՀՕ-117 –Ն ՀՀ ՕՐԵՆՔԻ դրույթներով, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ 26.12.2002թ. թիվ ՀՕ -510 –Ն ՀՀ ՕՐԵՆՔԻ 7-րդ դրույթներով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով սեփականատեր Իգիթ Վահանի Հակոբյանի (ծնված 1970թ.) դիմումը և հաշվի առնելով ՀՀ Հողային Օրեսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, չի հակասում քաղաքաշինական նորմերին:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Վերականգնել Արաքս համայնքի Արտիմետ գյուղի Մ.Հերացու փող. 33 հասցեում գտնվող գույքային միավոը, 0.1հա օրինական տիրապետված և տիրապետվող հողամասը: Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, օրենքի ուժով ճանաչել Իգիթ Վահանի Հակոբյանի ( ծնված 1970թ.) սեփականության իրավունքը:

2. Վերը նշված գույքին տրամադրել Արաքս համայնքի Արտիմետ գյուղի Մ.Հերացու փող. 33 հասցեն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 15

Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2023 թվական N 1235–Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի 1017-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34–րդ հոդվածի 1–ին մասով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 26-ի «Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի 2023 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 1017–Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման 1–ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 16
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477 araqs.hamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2023 թվականի N 1236-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետը և Ա/Ձ Գայանե Մնացականյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Գայանե Մնացականյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի վարչական տարածքում 2023թվականի 4-րդ եռամսյակին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:

2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 150-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 16
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

## ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2023 թվական N 1237-Ա

## ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38–րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Տեղական ինքնակառավարման օրվա առթիվ նվերներ ձեռք բերելու նպատակով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 8.2.4–ի (Այլ մշակութային կազմակերպություններ) 4237 հոդվածից հատկացնել 103,050 (հարյուր երեք հազար հիսուն ) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի նոյեմբերի 16
Արաքս համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477 araqs.hamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

17 նոյեմբերի 2023 թվականի N 1238-Ա

**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Մարիամ Ավետիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-013-0002-0001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Դավիթ Բեկի փողոց, 40 հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Դ. ՂԱԶԱՐՅԱՆ**

2023թ. նոյեմբերի 17

Արաքս համայնք